Լրամշակված տարբերակ
Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-976[6]-15.09.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Ուժը կորցրած ճանաչել «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (3 մարտի 1998 թվականի, ՀՕ-203) 10.1-րդ հոդվածի 6-րդ մասը:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
Ա	Բ	Գ
ՀՀ կառավարություն	ՀՀ վարչապետի նախագահությամբ սույն թվականի մարտի 10-ին կայացած գործարարների աջակցման խորհրդի նիստում տրված հանձնարարականի, տնտեսվարողների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններին ներկայացվող հաշվետվական փաստաթղթերի նվազեցման և միասնականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորությամբ ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ (2010 թ. մարտի 23-ի թիվ 01/16.31/1203-10 գրություն): Նախատեսվում է, որ բարձրացված խնդրի համապարփակ կարգավորման նպատակով մինչև սույն թվականի հուլիս ամիսը աշխատանքային խումբը կուսումնասիրի և կմշակի հաշվետվությունների նվազեցման և միասնականացման իրավական ակտերի ամբողջական փաթեթ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ներկայացված իրավական ակտերի նախագծերի փաթեթի ընդունումը համարում եմ ոչ նպատակահարմար:	